

ՇԱՀԻԿ

ԽԱՂԱՐԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆԷ՝ ԳՐ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆԷ՝ ԵՍ, ԴՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԴՈՒՄ, ԱՆՈՒՄ,

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ՅԱԿՈԲ ՊԱՊԻՍԵԱՆ, Լ. ԼԱՐՍԵՆ,

ՍՐ. ԶԱՎԱՆԵԱՆ, ՄԻՋԻՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Սա եմ «Շախիկ» եւ ինչ գոթ «Շախիկ» չպիտի հանձնաւ:
Իմ անունս պարտաւ զի Երանանի բնական չպիտի տանէ:
Իմ փառսս կանխիկ պիտի դրէ:
Ամէն մարդ պիտի է յարգէ եւ զիտուն վրայ հասցնէ զիս:
Ոչ ոք պիտի է աչք ընկնէ իմ փառայիս, քո՛ղ աչքունեցողին աճը

եղայ

Պէտք է իմ փառսս ձեռ կոկորդը անցընէ:

Պէտք է ցնդանաւ, երբ ձեռ դրած յողումները չպարտին:

Պէտք է ձայն անգամ չհանէ՛ք եւ զիտուն վրայ դնէ՛ք, երբ ձեռքի

դէմ գրուի այս սխալներուն մեջ:

Երբ շատ բարկանաւ, պէտք է մեղանայէ:

Եւ երբ մեղանայիս մօտ ըլլաւ, պէտք է... քաջալի խմէ:

Թիի 85

Տնօրէն Ռ. Սաղաեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչունլու խան թիւ 7

ԵՐԵՎԱՆԻ 10 ՓԵՏՐ. 1909 Վ. درعهده غلطهده قورشولی خاندنہ نومرو ۷

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՑԱՆԵՐ ՀԵՏ

Թուրքիոյ Սահմանադրութիւնը
գլխաւորաբար մէկ քանի հոգիներու
հարամիլ իրաւ:

Խմբագիրներուն մէկ.

Անգլիացիներուն երկուք.

Իզմիլիականներուն երեք.

Անձէտ Բիւրաչի չորս.

Միւրդատ Հայկազին հինգ.

Ղաղարոս Զաւազեանին վեց.

Ասոնցմէ վերջը կուգան Կովկաս-
սահայ խումբը, Զարգարեան եղ-
բայրները, Հրանտ Կիւրճեանը, զաղ-
թականները, Վարդան Մամիկոն-
եանը, Ներսէս Վրդ. Խարախանեանը,

Մինաս Զեքազը, Սմբատ Բիւրատը
և Որդին, Բիւզանդ Բէշեանը, Օսմ.

Գոմիշէն, Արծիւ գրատունը, Թուղ-
թի վաճառականները, Ազգ. պատ-
մութիւնը, Հայաստանը, Արդունեան

խմբակը. բոլոր երեւելի և... անե-
րեւոյթ գերասանները, Յակոբ Պա-

պիկեանը, Արշակունեանց թագաւո-
րութիւնը, Արմենակ Ինճեանը եւ

ուրիշներ:

Իսկ հարամիլ չեղաւ ամէնէն
առաջ անոր որ կը պարծէր թէ

մեծ քիթ ունի եւ չնորհիւ այդ մեծ
քիթին, որ ամէն բանի մէջ կը խօ-

թէր, կրնայ խերը անիծել ամէնուն:

Յետոյ հարամիլ չեղաւ նաև.
Վիլհելմ Կայսեր մէկ.

Ռուպէր Եազըճեանին երկուք.
Արտասահմանի թերթերուն երեք.

Արրահամ Ասլաւադեանին չորս.
Զիլիկիւրեան Վրդ. ին հինգ.

Թօքթիւկեանին վեց.
Աւստրիոյ եօթը.

Իսկ ասոնցմէ վերջ կուգան՝ Գր.

Պարտիզպանեան (Ռ. Եազըճեանին
սենեկապահը), շարդաճի Սահակի

տղուն, Թրամուշիլ և Թերթերու
անօրէններուն, բոլոր փոխաններուն եւ

գօթիսէններուն, Մէնէվիլեան Վրդ. ին
Գերման դեսպանին, Պ. Հիւլիէնին,

Լէֆի կիներուն, Նէճիպ Մէլիսմէլին,
Պապա Թահիրին, Բըթի Շանի

վարձկալին, պէքճիներուն եւ չեօր-
ճիներուն:

Եւ խմբագիրը Սահմանադրութեան
չնորհիւ մարդ եղաւ, որովհետեւ

խմբագիրը հին օրերու մէջ հազիւ 1/3
մարդ էր եւ մնացեալը... ինչ որ
կուզէր:

Եւ մարդ մը, միշտ իրաւունք ունի
ամէն մարդու հետ տեսնուելու, եթէ

նոյն իսկ անիկայ Կայսր ըլլայ Գեր-
մանիոյ և Թագաւոր՝ Բրուսիոյ:

Հետեւաբար անցեալ ամիս, ութ օր
Պերլին գտնուած յիշոցիս, որոշեցի

այցելել մեր հին բարեկամին՝ Վիլհել-
մին, որ եթէ ձեռքէն դար հին օրե-

րու մէջ Հայուն անունը իսկ չպիտի
ձգէր Թուրքիոյ մէջ... այնքան կը

սիրէր Հայերը:

Մեծ ու Վեհափառ բարեկամ մըն
էր ան միայն... հին օրերու մէջ և չեւ

գիտեր թէ՛ ինչու Յուլիս 11էն յե-
տոյ մէկէն ի մէկ խզեց մեզի հետ

իր ունեցած բարեկամութիւնը, բա-
րեկամութիւն մը որ կապուած էր...

աղբիւրով մը:

Որովհետեւ Վիլհելմ Կայսրը այդ
վեր դարձած պիտեմով թագաւորը,

Թուրքիացիներուն աղբիւր մը նուր-
բեց որպէս զի պապականիս յազե-

ցնենք, ճիշդ ինչպէս որ տեսակ մը
աղբիւրի դեր կը կատարեն այն կի-

ները որոնք ընդհանրապէս Աւստրիա-
յէն կուգան... եւ կը խօսին Գեր-

մաներէն:

Այդ Գերման Վեհափառը շատ կը
սիրէր մեր Վեհափառը և միշտ իր

սէրը կը յայտնէր խօսքով, թէ և զեռ
գործքով բան մը տեսած չունէինք

բնաւ:

Ու Կիրակի առտու մը, Արարողա-
պետին միջոցաւ ընդունուեցայ Կայ-

սեր կողմէ, որ այն միջոցին կ'աշխա-
տէր... պիտեմուն հետ:

Ներս մտայ...
Դեկտեմբեր 15ի դէմք մը:

Մուլթ, ամպոտ, փոթորկալից եւ
անաւոր:

Կարծես դէմքին վրայ ելեկտրա-
կանութեամբ լեցուն ամպեր կային

եւ որոնք մօտ էին պայթելու:
Վայրկեան մը, ինչ մեղքս պահեմ,

վախցայ և օգնութեան կոչեցի Ս.
Սարգիսը, որդին Մարտիրոսը և ա-

նեքձագը՝ Ս. Թադէոսը:

Արարողապետը յայտնեց թէ՛ Հայ
խմբագիր մըն է որ կ'ուզէ էնթեր-

վիտը ընել Ն. Վեհափառութիւնը:

«Հայ խմբագիր» բառը բաւա-
կան ջիղերուն դպաւ կարծեմ. բայց

կրցաւ ինքզինքը զսպել և հարցուց
թէ՛ ինչ ունիմ հարցնելիք:

— Տէր Արքայ, դո՛ւք որ գրեթէ
ամբողջ Եւրոպան կը ճաչնաք և

գիտէք թէ՛ ինչ կանցնի կը դառնայ
անոնց դաշիճներուն մէջ, կրնա՞ք

ըսել թէ՛ ինչ կարծիք կայ Թուրքիոյ
մասին...:

— Անկեղծ պիտի ըլլանք չէ՞...
— Բնական է Տէր Արքայ, ան-

կեղծ այնքան որքան են ձեր Պոլսի
գեսպանը և Պարսկահպատակ Տիգրան

Ելքէնճեանը...
— Այն ատեն ըսեմ թէ Թուրքիա

չա՛տ վատ դրութեան մը և չա՛տ
գէշ ճամբու մը մէջ կը գտնուի...:

— Ինչպէս...
— Որովհետեւ Գերմանիոյ բարե-

կամութիւնը կորսնցուց...
— Կարելի չէ՞ այդ բարեկամու-

թիւնը լապտերով փնտռել և գտնել:
— Կարելի է, բայց, այդ լապտեր-

ները հին ուժիմի օրերէն մնացած ըլ-
լալու են:

— Ներեցէք Տէր, չատ գէշ
ճամբու մը մէջ կը գտնուի, ըսի՞ք

Թուրքիա. այդ գէշ ճամբուն վերջը
ո՛ր կ'երթայ...:

— Լոնտոն:
— Լաւ ճամբաները ուր կը յան-

գին:
— Պերլին...:

— Հոտ ճիշդ էք, Տէր Արքայ,
բարի մարդոց օթեւանն է Պերլին. Ռ.

Եազըճեանն ալ էոս եկաւ. բայց ըսէ՛ք
Տէր Արքայ, Գերմանի փաշա՞ աւելի

կարող է թէ Հիւլի փաշա...:

— Երկուքն ալ անկարող մարդիկ
են. միայն մէկ մարդ կայ Թուրքիոյ

մէջ իբրեւ կարող, ան ալ Թիւրի փա-
շան էր, որուն Սեւ Արծիւ պատուա-

նչանը տուի:
— Բարով խերով չի տայիք:

— Ինչո՞ւ:
— Որովհետեւ մէկ օրը Սեւ Ար-

ծիւ տուիք և միւս օրը սեւ ձիւն
եկաւ գլխուն...:

— Հոգ չէ, կ'անցնի. իմ պիտե-
րուս գլխուն ալ ձիւն եկաւ. իմ պե-

տիս ալ ատեն մը խոնարհեցան,
բայց այժմ հետզհետէ կը բարձրա-

նան, Արդէն Մատթէոսի Աւետարա-
նին ճրդ գլխուն, Դրդ համարին

ճրդ երեսին Զիւղ տողին մէջ Բրիտ-

տոս, Բողոքականներու Աստուածը,
կ'ըսէ. — «Որ խոնարհեցուցանէ

զանձն իւր բարձրասցի» Վե. իմ պիտե-
րուս ալ այդ պատուիրանին կը հետե-

ւին, իբրեւ բարի Բրիտանեայի...
պիտեմ:

— Ներեցէ՛ք, Տէր Արքայ, ինչ
պէտք է ընէ Թուրքիա. նոր ուժիմը

պէտք է ընդունի թէ՛ վարելու է հի-
նին:

— Եթէ խօսքդ կրնարու մասին
ըլլար, ո՛չ, պիտի պատասխանէի,

որովհետեւ ամէն բանին հինին կա-

րելի է Յիարիլ, հինցած կնոջ,
ո՛չ. բայց ուժիմը տարբեր բան է և

անոր հինը մախպալ է:
— Ինչ գաղափար ունիք Օսմ.

Գոմիշէնի վրայ...
— Անոնց մասին ու եւ գաղա-

փար չունիմ. ոչինչ կրնամ ըսել ա-

նոնց մասին. վախճալիք մարդիկ են,
է՛հ, կրնայ ըլլալ որ գահնկեցու-

թեան խնդիր մըն ալ իմ մասին կը
հանեն:

— Սուլթանին բարեկամ էք միշտ
չէ՞...:

— Ապացոյցը միշտ տուած եմ...
պատուանշան տալով և աղբիւր չի-

նելով...
— Հայերը կը սիրէ՞ք.

— Սուլթանին չափ:
— Բայց հին ուժիմի օրով:

— Ա՛հ, այն ատեն ուրիշ. ու-

րիշ սիրուելիք շատ բաներ կային և
Հայերը սիրելու ատեն չէի ունենար:

— Ներեցէ՛ք, Տէր Արքայ, ինչո՞ւ
այլեւս ձեր ձայնը ձուներ չկայ. ասկէ

առաջ ձեր մէկ խօսքով իրար կ'ան-

ցընէիք Եւրոպան:
— Ժիշդ է. այս օրերս քիչ մը ցե-

վաղիլ եղայ, քիթս կը վազէ և ատոր
համար է որ ձայնս չելլար... եթէ

ոչ...
— Եթէ ոչ...:

— ... Ամբողջ Եւրոպան կը շար-

ժէի:
— Արդէն կը շարժի Եւրոպան, Տէր

Արքայ...
— Ինչպէս:

— Երկրաշարժէն:
— Հի՛, հի՛, հի՛...:

Ու Վիլհելմ Կայսր հինգ վայրկեան
խնդաց:

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«Ծ Ա Ղ Ի Կ»

Պիտի հրատարակուի չորս էջ
միջոց 10 փարայի

ՍԱՆ

ՍԱՆՈՒՑ

ՍԱՆԵՐ

— Ահմէտ Րիզայի մասին ինչ
գաղափար ունիք, Տէր Արքայ, խոր-
հրդարան մը կրնա՞յ վարել :

— Խորհրդարան մը վարելու մա-
սին բան մը չեմ կրնար ըսել, բայց
լաւ տեսակէն ազլկանց դպրոց կըր-
նայ վարել... Սուլթանին հովանաւո-
րութեան տակ...

— Իմացանք որ Թուրքիոյ Սահ-
մանադուլութեան լուրը առած օրեր-
նիդ, փորի ցաւ մը ունեցեր էք,
չառ ծանր տեսակէն, ստո՞յգ է...

— Այո՛, պաղատութեան հետե-
ւանք էր: Յուլիս 11ին Թուրքիայէն
պաղ-հովեր սկսան փչել, և յետոյ
ես ինծի չկրցի կերցնել, երբ մէկ օրը
Ֆէրիտ փաշայի պատուանշան կը
զրկէի և միւս օրը պաշտօնանկ կը
ըլլար, դոնէ ճամբայ հանած չըլլայի:

Մարդկութիւն է կը պատահի.
միայն Պապը անսխալ է և մէյ մըն ալ
մեր Ագգ. Երեսփ. Ժողովը և
Հիւսէին ճանխորդ: Աղէկ միտքս ին-
կաւ կը ճանչնաք Հիւսէին ճանխորդ:

— Ո՞վ կ'ըլլայ. ատանկ մարդիկ
չեմ ճանչնար, կ'երեւի սահմանադ-
րութեան մահաւորներէն է:

— Այո՛ և շատ չնորհքով մահաւոր
մը, հոտուրտացողին քիթը կ'իյնայ:
Աղէկ միտքս ինկաւ Տէր Արքայ,
ինչու Պուլկարիոյ Ֆէրիտնանտ իշ-
խանը մէկէն ի մէկ ինքզինքը Ձար
հռչակեց...

Ոչինչ. պարզապէս Ռուսիոյ
Ձարին ճախն մը ընել ուզեց. ուրիշ
նպատակ չունէր, շատ չնորհքով
մարդ է, մօրուք ալ ունի:

— Մօրուք ունենալը չնորհքով
մարդու նշան է:

— Հարկաւ:

— Բայց դո՛ւք... Տէր Արքայ:

— Ես բացառութիւն կը կազմեմ:

— Կարելի՞ է հարցնել թէ՛ պիտի
այցելէ՞ք դարձեալ Սուլթանին, ու-
րուն դռները միշտ բաց են մանա-
ւանդ այս միջոցին ձեր առջեւ:

— Հոգիս յօժար է, բայց մարմինս
տկար... Հին ուժիմը եթէ գոյ ես
ալ կուգամ...

— Իսկ եթէ երբէ՛ք չի գայ...

— Այն տոնն իմ տեղս Էտուարտ
Թագաւորը կուգայ... որ թրքական
կարկանդակները ինծի չափ և գուցէ
ինձմէ տեղի կը սրի և շատ կը
փափաքի համը նայիլ...

— Դուք համը նայեցա՞ք այդ
կարկանդակներուն...

— Է՛ն բաւական. հազիւ քանի մը
պատառ բերանս զրած էի, երբ
կարգ մը երիտասարդ թուրքեր վը-
րայ հասան և իրենք ուտել ուզեցին.
արդէն անանկ կ'ըլլայ, այս աշխար-
հիս վրայ մարդ հանգիստ սրտով
բան մը չի կրնար ուտել, երբ մա-
նաւանդ ուտելիքը պողպատ է:

— Երեւոյ՞ք Տէր Արքայ, կ'ըսեն
թէ վերջերս ձեր քիթը, նախարա-
րապետ Պիլովի հետ բաղխումի մը
միջոցին կոտորելու պէս եղեր է,
ճի՞շդ է արդեօք:

— Իմ քիթս խօսքով չի կոտորի.
թէ քիթը կ'ընտանի. բայց դարմա-
նելը չա՛տ դուրիս է: Իսկ Թուրքիոյ
մեծ քիթերը երբ կոտորին, այլեւս ո՛չ
կը շինուին և ո՛չ իսկ գոնէ քամի
կրնան ըլլալ... Գարաքէօյի կամուր-
ջին պէս:

Հարցարանս աւարտած էր:

Թեմիման մը ըրի և դուրս ելայ:

Գ. ԹԱՐԱՍԵԱՆ

Սան, Սանուց կամ Սաներ... Նոյն
բաներն են երեքն ալ և կաթիլ մը
ջուրի պէս իրարու կը նմանին:

Խնդիր չէ թէ Բերայի Էստեան
վարժարանի սաները, Սանուց Միու-
թիւն են թէ՛ Սաներու... այլ խնդի-
րը աս է որ, Բերայի սաները այսօր
օգտակար կ'ըլլան թէ՛ թաղին աղ-
քատիկ ուսանողներուն և թէ՛ թա-
ղեցիներուն:

Ուսանողներուն՝ որովհետեւ ա-
նոնց սնունդ և թաղեցիներուն՝ ու-
րովհետեւ անոնց ալ... զբօսանք կը
մատակարարեն:

Եւ հրաշք մըն էր կատարելապէս
երբ կարող եղան Բերայցի չորս ժամ
բանտարկել... Բերայի Արուեստանոցի
սրահ-բանտարան մէջ, Սահմանադրական
Թուրքիոյ, Ազատութեան, հուրի-
յիսի այս օրերուն:

Այս հրաշքը եթէ Յիսուս ընէր,
Աստուծոյդի է պիտի ըսէին, և ու-
րովհետեւ հիմա անիկա իր Պապին
քովն է, ըսել է Բերայի Սաներուն
ալ պէտք է ըսել Սա... Դա... որդի:

Բուն Բարեկենդանի կիրակի օրով
աղուոր բազմութիւն մը կը վերելա-
կէր Բերայի Գողգոթան, որ Շնորհաց
1909 թուականին մէջ այլեւս երու-
սաղէմ՝ զգոնուիր, այլ Ս. Երրորդու
թեան եկեղեցին մէջ:

Սանդուխ մը:

Յետոյ սանդուխ մը ևս:

Յետոյ դուռ մը, որուն առջեւ Պ.
Նարիկէճեան, Միութեան ընդհանուր
Ժողովին ատենապետը (մեր Ահմէտ
Րիզան) կեցած շնորհալի սան-անդա-
մուհիի մը հետ, ամենայն կենցաղա-
գիտութեամբ և քաղաքավարու-
թեամբ կը... մերկայցնէր իրեն դի-
մողները... օտքէն մինչեւ գլուխ:

Մերկանալը խնդիր չէ, մերկա-
նալէ վերջ երկու զրուշ ալ կ'առնեն
սաները և ասիկա է որ մարդուս մը-
տածել կուտայ թէ՛ գո՛նէ մայրաքա-
ղաքիս Պ. Պ. գողերը մերկացնելէ
վերջ երկու զրուշ չեն ուզեր:

Ու կ'անցնին դիմացի սրահը...
Անցնիլ...

— Ե՛նն մնաք կ'ըսեն միաբերան
երեք սան-օրիորդներ, Աղքատա-
խնամէն փոխ առնուած պնակի մը
զրուխը կեցած:

— Հասնեցէ՛ք ցնծալ, կը կրկնէ
ուրիշ օրիորդ մը թղթի կտոր մը եր-
կնցնելով:

— Աստուած ընդունելի արասցէ,
վրայ կուտայ պարոն մը, որ կար-
ծեմ Չօրուրեան Չարեհն էր. Միու-
թեան եղբարական և գանձային նա-
խարարը:

— Ու մեր զինուորական տուրքը
վճարելէ յետոյ կ'անցնինք...

— Թեքստուռ, կը գոչէ յանկարծ
ժամկոչը և հազիւ ժամանակ կ'ունե-
նամ գլուխս մէկ կողմ քաշելու,
որպէս զի վրայ չի տնձ գլուխս, որ
կ'երեւի շատ մեծ կարեւորութիւն
չունէր ժամկոչ աղբոր համար, որ ա-
թուս կը հասցնէր տիկիններուն:

Հանդէսը կը սկսի... սրահի մը
մէջ, ուր հին բարի ժամանակներու
մէջ Տիկին Մատակեան աղբին աղ-
ջիկները կը կրթէր: Բայց սրահ մը...
որուն մէջ հազիւ հարիւր հոգի կրնան
սղմիլ և ուր մօտաւորապէս 500...
Հայ սղմեցուցեր էին: Հայը վար-
ժուած է սակայն նեղ տեղեր մնալու
և իր ճակատագիրն եղած է նեղ
տեղերէ երեք չազատիլ:

Վարադուրը կը բացուի և նախ
ատենապետ Պ. Ֆէրուխան հանդէսը
կը բանայ կարճ աղօթքով մը և Հայր
մերով մը: Թէ և Պ. Ֆէրուխան ա-
սանկ բան չըսաւ, այլ պարզապէս
ըսաւ թէ... վարադուրը բացուած է:

Յետոյ Տիկին Չապէլ Աստուոր
կարդաց իր աւարտական թէզը՝ որով
ըսաւ թէ՛ կինն ալ Աստուած ստեղ-
ծեր է և թէ չա՛տ սխալ է այն գա-
ղափարը թէ՛ կինը Սատանան ստեղ-
ծեր է: (Դրափեր): Աւելցուց յետոյ
թէ Ս. Դիրքին ժամանակակից այ-
րերը շնորհակալութիւն կը յայտնեն
եղեր Աստուծոյ որ զիրենք կին չէ
ստեղծեր: (Դրափեր եւ նաղարա մը
որ այս միջոցիս վարեմ կ'արձակէր
մեծայարգ ջրհանկիր մը որ մինչեւ
առտուս խմած եւ թաղ. խորհուրդին
վրայ կոխի եկած էր):

Յետոյ երկու պարոններ՝ Գօճապըրը
և Համբօ խաղացին «Առնամաբոյժը»:
Թէ՛ սքանչելի կերպով խաղացին
և թէ՛ հրաշալի կերպով... պօռացին
անանկ որ եթէ չեմ սխալիր շատեր
ակնաշնչին ցաւելով մեկնեցան:

Մեր Շահէնը (Ոչ Ննովք Շահէնը)
ներկայացուց դարբիններու գործա-
դուրը: Մարթէն էֆ. Յակոբեան որ մեր
գեղարուեստէ հասկցողներուն լաւա-
գոյնն է, շնորհաւորեց զայն և ասիկա
իրեն գովեստ բաւական է Շահէնին:

Իսկ Օր. Եւնիկէ Հաճեան, սի-
րուն ու շնորհալի Օրիորդ մը, շատ
աղւոր նուազեց մանուկներն վրայ և
ստացաւ... ծափեր: Այս առթիւ
յիշեալ Օրիորդը մեր կայսրութեան
գեղարուեստական Ակադեմիին ան-
գամուհի անուանուեցաւ:

Յետոյ...

Յետոյ տեղի ունեցան շահեկան
նորութիւններ... ինչպէս կ'ըսէր յայ-
տապիրը... Սանուց Միութեան:

Օր. Վասիլեան, շա՛տ վարժ,
շա՛տ հմայիչ, շա՛տ սիրուն, շա՛տ
ջինջ ձայնով մը երգեց Ֆրանսերէն
երգեր և դո՛ւ թողուց... քիչով դո-
հացող ներկաները:

— Հայերէն երգ մըն ալ, Օրիորդ,
պօռաց սղգասէր ներկայ մը:

— (Օր. Վասիլեան դէմքը թթուե-
ցուց. պահ մը խոժու նայեցաւ հա-
տարակութեան վրայ ու արհամար-
հական կերպով) Հայեւեմ ետգ չեմ
գիտեմ... բարեհաճեցաւ ըսել:

— Բանդէսը վերջացաւ...
Ներդուր թի՛ւն, սխալեցայ, երբ
վերջացաւ կ'ըսեմ, պէտք է հաս-

կընաք որ, Օր. Վասիլեան վար իջաւ
բեմէն...

Օրիորդներ, Սանուց Միութե-
անէն... միշտ կը շրջէին հանդիսա-
կաններու մէջ և մեծ աչալընու-
թեամբ կը հսկէին նախ բարեկար-
գութեան և յետոյ ներկաներուն վը-
րայ, որպէսզի... կծիկնին չի դնեն
առանց... զինուորական տուրք վը-
ճարելու:

Երեք օրիորդներ մանաւանդ, ու-
րոնք կ'երևի նոյն միութեան ա-
մենէն շնորհալի և ամենէն գործօն
անդամներն էին, ճանձ չէին փախ-
ցներ և եթէ ամառ ըլլար ճանձներուն
ալ տոմսակ պիտի ծախէին...

Վիճակահանութեան սկսան, դա-
դարէն յետոյ ուրկէ ինծի «Միջնադ» մը
իսկ չեղաւ, մինչդեռ Ենովք Արմէն
հինգ զրուշով ոսկինոց աւարկայ մը
առաւ և կիսնոսիքը հանեց: Տէր.
Յակոբեան «Միջնադ» մը առաւ և մեր
Ընկեր Թօկօն գեղեցիկ բարձ. մը,
մէկ բարձի վրայ ծերանալու համար:

Բանախօսեցին ընկերք Ահմէտի
և Վարդգէս. առաջինը Կովկասցի
կինները գովեց և երկրորդը Թուր-
քիացի կինները: Իսկ եթէ ինծի ալ
արտօնէին ես պիտի գովէի աշխար-
հիս բոլոր կինները առհասարակ սկըս-
եալ... ուրկէ որ կ'ուզէք... մինչև...
ուր որ կը փափաքիք:

Հանդէսը վերջապէս վերջա-
ցաւ... և հանդիսականները մեկնե-
ցան դո՛ւ, ուրախ և բօքօզած տպա-
ւորութեան տակ:

ԸՆԿԵՐ ԿԻՆՈ

ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻՆ
Կ Տ Ա Կ Ը

Յանուն Հօր և Որդոյ և հօգույն
Սրբոյ. ամէն:

Ես Աղբ. Երեսփ. Ժողովս յօժար
կամօք և առանց ուրիշ թելադ-
րութեան, կատարեալ խելքս գլուխս
եղած ատեն, առաջի Աստուծոյ եւ
առաջի Սահմանադրութեան, իմ ար-
դար վաստակով հաւաքուած Աղ-
բային խնդիրներս, այսինքն բոլոր
հարստութիւնս, շարժուն թէ՛ չար-
ժական կալուած, ազատ կամօք կը
կտակեմ, յաջորդ ժառանգորդներուս
և կը փափաքիմ որ հետեւեալ կամ-
քերս կէտ առ կէտ գործադրուի:

Ա. — Նախ և առաջ պէտք չէ
երբեք ու եւ է նիստ առանց Արիս-
տակէս Գասպարեանի գումարուի և
անիծելով կանխեմ այն ժառան-
գորդներս որոնք անմիջապէս կուղեն
օրակարգին անցնիլ:

Բ. — Ներքին կանոնադրի քըն-
նութեան խնդիրը՝ որ փաստարանիս
Տիար Մինաս Չերազի քով չա-
շահու զրոյթ եմ, կ'ուղեմ որ ապա-
հովապէս տարուէ տարի տոկոսները
մայր դուստրին վրայ աւելցնելով՝
թուանս թուաներուն մէջ բաժնուի
հաւասարապէս:

Գ. — Յիմարեանի Ս. Ի համարա-
տուութեան խնդրոյն կէսը Վաղարուս
Չալազեանի և կէսն ալ խնդիր Սի-
մօնեանի և Արիստակէս Գասպար-
եանի կը նուիրեմ, և...

քենք ուր ուղարկուեալ պէս գործածեն յորդոց որդի:

Դ.— Կրթական խնդիրը՝ մեր հին եմբարտար Հինդուական պապա Յովհաննէսին կը թողուի, սա պարտաւոր է ըստ դպրոցներու տնտեսանքուն և տնտեսականներուն հետ խորհրդակցելով, իմին իրեն թողուցած գոյքս արդիւնաւորել:

Ե.— Դաւառի հարստահարութեանց առթիւ Հայեակ եպս. ի Բ. նիստին մէջ բերած խնդիրը՝ կը փափաքիմ որ երեսփ. ժողովոյ ընտանեացըս մէջ նուիրական պահուի, որովհետեւ ան մեր գերդաստանին յորդոց որդի ժառանգաբար մնացած թանկարժէք և չնայաւորելի աւանդ մըն է. արդ իմ կամքս այն է որ ժառանգներէս և ոչ մին չըլլայ որ անոր դպի. այս խնդիրն է որ միշտ պիտի յիշեցնէ իմ յաջորդներուս թէ իրենք հողեղէն արարածներ են:

Զ.— Երուսաղէմի խնդիրը՝ հաւատարմաբար ըստ Ազգին կը նուիրեմ. միայն թէ տարին անգամ մը Ս. Պատարագ մատուցուի այս խնդրոյն հոգւոյն համար, Ս. Յարութեան Մեռելոցին, Աթոռանիստ կամ Իսկէմրիանիստ Մայր Եկեղեցիին մէջ Ս. Պատարագը պէտք է մատուցանէ Տ. Գարրիէլ Արքեպս. Նորատունիէանը և պէտք է սպասաւորեն Տ. Տ. Տիգրան Եկեղեցեան, Արիկ Մուպահանճեան, Արախամ Այվազեան, Արշակ Այվաջեան, Չնքուշի Աւետիս և Եղիշէ Զիլինկիրեան վրդ.ները:

Է.— Կեդրոնականի հարցապնդման խնդիրը իմ հոգւոյս համար կը փափաքիմ որ ազգասիրտուն բաժնուի:

Ը.— Օրինական մեծամասնութեան խնդիրը, կը պատուիրեմ ըստ ժառանգորդներուս, որ չապաւար չը վստահեն. տե՛սի պէլայի պէս բան մըն է ան. կնճռոտ դործ մը երևան գալուն պէս, անմիջապէս այս ատենական կանոնադրութեան խնդիրը հանկեք մէջտեղ և ամէն վտանգէ կը խալսիք, ես այս խնդրով շատ վտանգներ անցուցի. բռնաբար պէս բան մըն է ան, աղէկ պահեցէք:

Թ.— Գաւով իրարու հայոյնու, իրարու գլուխ պատուելու և զիրար էշ, կապիկ, շուն, խոզ, վայրի խոզ բազ, սագ, հաւ, կատու, թռչնակ և այլն անուանելով որակելու խնդիրը ձեզի կը թողուի, ձեր փափաքածին պէս դիմել որեւէ պահա մը և չափազանցելով չհարձակուի մէջերնիդ:

Արդ հիմայ որ ամէն բան ըսի, կը վաւերացնեմ այս կտակս բուն իմ ստորագրութեամբ և յօժար կամօքս, իսկ եթէ ժառանգորդներէս մէկը այս կտակիս տրամադրութեանցը հաւատարմի, այնպիսին անիծեալ ըլլայ, եւ մնացորդ ժառանգորդներս պէտք է որ զայն իրենց մէջէն արտաքսեն եւ այսպէս գործեն շարունակէն: Աստուած չամչոունէ ձեզ, աղօթեցէ՛ք հոգւոյս համար:

Պրնցաւ կտակս այս ի Գուրչունիւ խան ի ներկայութեան Ընկեր իրի:

ՅԶԻ. ԵՐԱՍՓ. ԺՈՂՈՎ.

ԿԱՐԴԱՅԷՔ
ՄԵՐ Դ. ԷԶԸ
«Կաթոլիկ-ժողով»ի սիրբորդը
սրամիտ եւ շահաւետ

ԱՊՏԱԿՆԵՐ

ԶԱՐԳ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՛

ԳՈՒՐԵՆՈՒՆՈՒ ԽԱՆԻ ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵՆՈՒՑՈՒՄԸ

ԱՍՏԻՃԱՆ

ՊԱՏՈՒՄԱՆՇԱՆ

ՊԱՇՏՈՆ

ԱՍՏԻՃԱՆ

«Տիւտիկ»ի Ա. աստիճան տըրուեցաւ մեր Կայսրութեան Եւրոպական նախարարութեան ընդհանուր հաշուակալութեան անհատական ամսաթուղթներու դիւանին միւլթիլ թէքտէլէնցի Ստեփան Բարէլեանի:

«Կուլտուր»ի Ա. աստիճան և ժապաւինեալ մեծ գիրքի պատուանշան Կայսրութեան «Ճէպիլ» գործարանին Տնօրէն Ճենիլեան էֆ. ի, որ կատարեալ խղճմտութեամբ կուլկուտայ Ե. Բ. Ը. ի հաւաքած գումարները: Կայսրութեան որոշեց ըրեւելթի մը տալ:

«Փետայուրեան» Բ. աստիճան և ոսկեճամուկ ու նարնջագոյն վերարկու շորհուեցաւ մեր Կայսրութեան տաւալունքէն Բերդէ փաշա Տաւատեանի:

«Քորպանո»ի Ա. աստիճան Կայսրութեան գերաստանական Ակադեմիին անդամներէն՝ Ալիքսանեան փաշայի և Վահրամ փաշա Փափաղեանի:

ՊԱՏՈՒՄԱՆՇԱՆ

«Կանաչ Ծնրակապ» պատուանշանին ականակուռ մեծ խաչը և գափնէ պսակներ՝ մեր Կայս. Պայտան առաջնակարգ գերաստանահինքէն Տիկին Սիրանոյ: Ալիքսանեանի և Օր. Էլիզ Պիննէմէճեանի:

«Աղւոր Տղայ» պատուանշանին Ա. կարգը շորհուեցաւ Կայսրութեան Օրտուի դեսպան կոմս Երուանդ Անդրեանեանի, ի վարձ իր բարեօք և հաւատարմ պաշտօնավարութեան:

«Խելօր!» պատուանշանին մեծ խաչը Օրտուի հայկական դեսպանատան ղեկավարական կցօրդ Չօր. Յակոբ Զիլեանօֆի:

«Հեքու-Ֆեուայի» միւլթիլ պատուանշանին ականակուռ աստիճանը և մեծ շէմիլէն, Հայկական Դ. Զօրաբանակին Միհրդատիէ գունդին 42րդ հեծելախաչին հրամանատար ղերգնդապետ Չօրաւար Բենազ Միհրդատի:

«Ասալ...» Պատուանշանին Բ. կարգի սեռ. ճերմակ Արծիւը Իզմիրալմակ էյրէֆներէն եւ Կայսրութեան հաւատարմատարներէն՝ Սերոր փաշա Դաւիթ-Մարգարէի:

«Փոստ փաշայի լուսնի» պատուանշանին Ա. կարգը Մարտիտ Սէֆերովի: Եր այս տարի յատուկ պաշտօնագրով մը մեր պա-

լատան Բապուճճի Պաշը անուանուեցաւ:

«Քիւլիկ գարագոյ» Պատուանշանին ականակուռ աստիճանը եւ մեծ ժապաւէնը վախ իմ ժողովուրդս ըսող մեծաւորին: (Այս պատուանշանը 1895ին տրուած էր, բայց բռնակալութեան պատճառաւ չէինք յանձնած):

«Հրդեհի» չքաղրամ Բերայի դեղագործներէն Լիօնճեան էֆ. ի, հրդեհ մարելու մասին մատուցած բարեօք ծառայութեանց իրրեւ վարձատրութիւն:

«Քիւրքիլի բայթօ» պատուանշանին ականակուռ աստիճանը մեր Կայսրութեան Տրապիզոնի ընդհ. հիւպատոս Սըր Բիւզանդ Միրիճանեանօֆի եւ եղբորը Յէրէսիէ նահանգին ժէնէալ-նահանգապետ Սըր Երուանդ Միրիճանեանօֆի:

«Պոյթօ» պատուանշանին Ա. Աստիճանը Գաւոր գիւղի մեծ աղաներուն, որոնք իրր թէ պոյթօթ ըրին Միացեալի պարահանդէսին: Իսկ սոյն պատուանշանին ականակուծը Չայրմայր Ճիմարտախօսի, որ գլուխ կանգնած էր այս հայրենասիրական և աղգասիրական... գործին:

«Սիրուն օրիորդ» պատուանշանին Ս. խաչը և բենիզեայ վերարկուն մեր Կայսրութեան Պանքային ընդհ. Տնօրէն կոմս Արամ Գալէնտէրի Օրիորդ Բրոշը, որուն անունը դրժբազդարար չենք գիտեր:

ՊԱՇՏՈՆ

Պարտիզակի երեւելիներէն, Սիւրական փաշա Չնճեան հրամանատար կարգուեցաւ տեղւոյն «Ուրեա» բանակին Տիգր գունդին: Նոյնպէս տեղւոյն փողոցներուն աւելածութեան բարձր պաշտօնին բարձրացաւ Պաթիթ պէյ Միլեան: Բէաքսիոնէրներու ընդհանուր քննիչ և հսկիչ, ինչպէս նաեւ Կայսրութեան Պարտիզակի ամառանոցին պալատին սենեկապետ և գանիլեճի պալի անուանուեցաւ Վեցմատղատէ Սեդրակ պէյ:

Բերայի, Կայսրութեան քաղաքապետական Սորբոյ նախագահ անուանուեցաւ Բենազ Մկրտիչ Պօղոսօֆ:

Սկիւտարի Տէֆթէրտար անուանուեցաւ Լապիճիճիզատէ Թէոդորոս էֆէնտի, որ նախապէս նոյն պաշտօնը կը վարէր Չոնկուլտաքի մէջ: Գաւորգիւղի Նախ պատուանուեցաւ Ակնայ գաւառին նախորդ Նախ տեղւոյն Ելիմեանէն Դաւիթեանդատէ Հօճա Սմաւտ էֆէնտի:

Կայսրութեան պալատին կաշի գործարանին Տնօրէն անուանուեցաւ մեր պալատան Չախատար Արիստակէս Գաւարեան:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.— Փիւնիկեցիներու, Կարկեղոնացիներու, Ասորեստանցիներու, Բարեկացիներու, Եղիպոտացիներու, Չուլունքու և Սելճուղներու Կայսրութեանց գեապանները, Մակեդոնական Կայսրութեան ընդհ. հիւպատոսը և Նոր-Նախիչևանի կառավարութեան Պոլսոյ ներկայացուցիչը կոմս Ազըլուտիեան

ՆԵՃԻՊԻ ԴԱՏԸ

[Ածական մը չի գտանք զինքը որակող]

ԴՈՒՐՍ ԶԱԼԻՄՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԷՆ

«Յանցանքը իմ չէ. Բիծս

կ'ըսէր ես կ'ընէի»

Ն. ՄԵԼԶԱՍԷ

Նէճիպ Մէլհաճէն, այդ խայտառակ, հրէշ, արիւնարբու, արիւնկղակ, հայահալած և ձիու գողին դատաւարութիւնը տեղի ունեցաւ երէկ: Մեծ բազմութիւն: Նէճիպ Մէլհաճէն շան պէս կը դողար: Բ. Չալուշեան կանչուեցաւ նախ՝ որ ամէն բանէ առաջ՝ «Դուրս ելի՛ր, ո՛վ գալիմ դատաւոր, վար իջի՛ր այդ աթոռէն, ուր արդարութիւնը պէտք է նստի», պօռաց նախագահին երեսին: Այս այն նախագահն է որ հին բռնակալ օրերու մէջ կը դատաւարտէր ձիու գող Նէճիպի տանջած Հայերն ու Թուրքերը: Ծի՛շտ է Պ. Երուանդ Չալուշեան և շատ իրաւունք ունի: Նախ դո՛ւրս, արդարութեան հետ երբե՛ք գործ չունեցող այդ նախագահը և յետոյ պէտք է դատել դատաւարանը Նէճիպը: Միհրդատ Հայկազնը ներկայ չէր:

— Ես երբեք յանցանք չունիմ, ըսաւ Նեճիպ Միլհաճէն, յանցանքը իմ ֆիքիսն է, ան կ'ըսէր, ես կը գործադրէի... ուրեմն զի քի ինձի այլ ֆիքս է որ պէտք է դատաւարանք:

Երէկ մեր Կայսրութեան Մեծ-Դուռը երթալով տեսակցեցան Նախագահ Ընկեր Կիկօի հետ:

— Բաթակոնիոյ մեծ-դեսպանը դուքս Յովսէփ Թօքաթեան և Պրազիլիոյ պալիկ դեսպանը Լորտ Տիգրան Թօքաթեան ևս երէկ կարեւոր տեսակցութիւն մը ունեցան Կայսրութեան Արտաքին գործոց Նախարարին հետ:

★★★ Արիստակէս Գաւարեան փորի ցաւ ունի եղեր որ այսքան Օրմանեանին ետեւէն ինկեր է: Բացարեւնք: Տիգրան Տէր Ներսէսեանի հրամարումէն վերջ Արիստակէս Գաւարեան, այս նախանձախնդրի Երեսփոխանը, այս անկաշառ աղղաւտէրը, այս ամէն բանի մէջ քիթը խօթող քաղաքացին, Մկրտիչ եպս. ի հոս աքսորուելուն պատճառ, Բերայի Թաղ. Սորհուրդէն 10 ոսկի աւանդ այս մեծ մարդը կը ներկայանայ Օրմանեանին և գործակատարութեան պաշտօնը կը խնդրէ. Օրմանեան կը մերժէ և անի թէ ինչու այսքան հակառակ է Գաւարեան Օրմանեանին: Տեսա՞ք մեծ Աղղաւտէրը մեծ Երեսփոխանը!...

★★★ Շահնազարին տեղ Պապիկեանը պիտի գրկեն եղեր Անատոլիոյ քիզի նոր պիլա մը Հայաստանցիներուն գլխուն: Շահնազարն ալ յանձնարարելի չէր, բայց Պապիկեանը երբեք:

ԿԱՂԸ «ԿԱԼՈՐ»

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՈՒՐԱՆԱՏԵՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ի. ՍԱՐԳՍԻԱՆ

«ԾԱՂԻԿ»—«ԿԱՎՈՇ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
(«ԲՈՒՋԱՆԳԻՈՐ»-Ի ԶԱՓ ԴՐԱԿԱՆ)

Ծաղիկ եւ Կավոշ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրուց։ Ծաղիկ կամ Կավոշ՝ առանձին՝ տարեկան 45 դրուց։

Ծաղիկ եւ Կավոշ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրուց։ Ծաղիկ կամ Կավոշ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրուց։

Ծաղիկ եւ Կավոշ միասին, Արշաւահմանի համար տարեկան 52 ծր. վեցամսեայ՝ 13 ծր.։ Ծաղիկ կամ Կավոշ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ծրանք։

Ոչ ոք զօրով բաժանող կ'առանցագրուի։

Դրամ կտնիկի չլրկողներ եւ մեր փառան ուսողներ կ'անժեմք եւ... կը խայտառակենք։

20^ր ԳԱՐՈՒ
ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Լ.Է.Լ.ՈՒՐԱՆ

ՏԱՍՆԵԱԿ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Յ. Գ. ՄՐՄԸ ԲԵԱՆԻ

Գին՝ 7 1/2 դրուց

Կեանքի, տիեզերքի, Աստուծոյ վրայ իմաստասիրական շինիչ տեսութիւններ եւ բանաստեղծութիւններ, որոնք այս անգամ բարձր վկայականներ տուած են իրիմեան Հայրիկ, Ս. Պապը, Դուրեան Եղիշէ Եպս. Յովհաննէս Բաղդադ Եւ Նմանիք։ Կը ծախուի Կ. Պոլիս Պալենց գրատունն եւ հեղինակին քով։

Կարգաւ եւ կեալ



ՎԱՅՆԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՅ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐԴՅՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏԻՈԱԾ

ՀՆԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱԶԻՆ

ԳԵՂԵՑԿԱՅԵՆՈՎ ԶԻՆՍԵ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆՍՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԴՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընելը —

— ՎԱՃԱԱՌՆԻՇԻՆ Եւ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐԵՋԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՅՅՊԻՍՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

ՄԵՐ ՍԻՐԲՐԻՉԸ
ՍՐԱՄԻՏ ԵՒ ՇԱՀԱՒՈՐ

Ա. ՀԱՐՑՈՒՄ

★★★★★ Ինչ տարբերութիւն կայ Միհրդատ Հայկազնի ու Միհրա Չե-րագի միջեւ։ ★★★★★★★★★★

Պոլսոյ համար շաբաթ մը պոյ-մանածամ, գաւառի համար՝ երկու շաբաթ։ Եւ աղւոր, եւ կարճ եւ եւ սրամիտ պատասխանը տուող պիտի ստանայ իր տուգինն մը լուսանկարը, քարոյ-բողոքի ձեռնով։ Երկրորդ մրցանակը շահողը՝ կես տուգինն։ Պատասխանները կը հրատարակուին շաբաթ օրերը, իսկ հարցումները կ'ըլլան երկուշաբթի։ Պատասխանները պետք է յղուին մինչեւ ուրբաթ օր։ Նոյնպէս գաւառներէն երկու շաբաթուան պայմանա-ծամով։

Դուրջունը խանի կայսրութեան մասնաւոր եւ միակ լուսանկարիչն է

ՍԻՄՈՆ

414, Բերա, Շիշակ-Ճաւրաջ, 414

Եւ Ս. Բ. մրցանակները շահողները, պիտի ելլան հոն լուսանկարուելու։

Ուրեմն, Տիկիններ, Օրիորդներ եւ Պարոններ միտքերնիդ սրեցէր եւ պատասխանեցէր։

Ամենքն սրամիտ պատասխան տուողին լուսանկարը պիտի հրատարակենք մեր քերթին մէջ։

ԾԱՂԻԿ—ԿԱՎՈՇ	
ՎՐԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ	
ԿՏՐՈՆ 32 ՓԵՏ. 10 1909	
ՓԵՏ. 10 (Բ. Ե.) վիճակա-հանութեան համար մասնակցե-լու իրաւունք։	
Անա՝ քան (20) էմիգրէնի Թիւերը	
25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212377
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231

ՀԱՅ ԶԻՆԱԿԱՃԱՌ ՂԱՍԹԻՈՅ

ԶԱՐԵՅ ՊԵՆԿԵԱՆ

Ուղղակի Ամերիկայէն բերել տուած եւ մանրաւոր գէնքեր, վաճառելի կանխիկ եւ ամսական վճարումներով։

Դիմեցէ՛ք Ղալաքիա, Գարաիւթոյ՝ Բաղնիքին կից քիւ 57 վանառանցը։

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր։ Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Միկրիշ Պօլսոֆ (Աշըր Էֆէնտի խան, թիւ 27 Գրաստանակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այլ-լազան միջերը մը այդ կարգի ամէն կերպ շիշերու եւ կարող է մրցիլ ամէն կերպով։ Վատան եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ ճոկիսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միեւնոյն ատեն աժանութիւնը քնարան ընտրած է իրեն։

ԸՄԱՍՆԱԳԻՏ ԱՏԱՄԱՐՈՅԺ

ՏՈՒԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիքի համալսարանէն, եւ անձնական ատամնաբոյժ եր-ջանկայիշատակ Ուղղաֆէրէտտին Շահին։

Բերա Մեծ Փողոց, ուսանական դեպքանատան գիմաց Սիթէ տը Սիթի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ակաւայի, լինտի եւ բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակոսներ սան քրօշէ է սան Բաք տասը տարի ապահովութեամբ։

Սոյն դարձանները կը կատարուին Դաղդիական եւ Ամերիկեան ամե-նալերջին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործու-ղութիւնները չիտի ընդունի, առանց ցաւի եւ առանց քնացուելու։ Դար-մանատունը Բարիքեան մասնագիտական վերջին սխալէմով, իր տեսակին մէջ եղական է։ Այցելեցէ՛ք եւ դատեցէ՛ք։

ՈՍԿԵՐԶԱՏՈՒՆ

“Բ Ի Ս Թ Օ Ֆ Լ”

ՄԻ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏԵՍԱԿ

ԱՄԵՆԱԼԱԻԱԳՈՅՆ

ԶԱՅՆ ՈՒՆԵՆՍԼՈՒ ՀԱՄԱՐ

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ

Այս
մարտն



Եւ «ԲԻՍԹՕՖԼ»
տնունը

Ամեն մէկ կտրին վրայ